

**«ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՍ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
ԵՎ ԱՐՏԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ»**

Վերջին ժամանակահատվածում գնալով ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (այսուհետ՝ Ապրանքներ) շրջանառությունը, ինչն իր անմիջական ազդեցությունն է թողնում երկրի տնտեսական զարգացման վրա, իսկ շուկայում նկատվում է վաճառվող ապրանքների, մատուցվող ծառայությունների և կատարվող աշխատանքների ծավալային աճ, որն իր ազդեցությունն է թողնում երկրում շուկայական հարաբերությունների արմատավորման վրա:

Շուկայական հարաբերությունների արմատավորմանը զուգընթաց կարևորվում է սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, մասնավորապես՝ ապրանքների և ծառայությունների ազատ ընտրության, դրանց պատշաճ որակի և անվտանգության ապահովման, լիարժեք և հավաստի տեղեկատվության տրամադրման, ճշմարտացի գովազդի օգտագործման, վնասի փոխհատուցման և այլ իրավունքների իրականացման երաշխիքների ստեղծումը, հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը²:

Մի կողմից ապրանքների շրջանառության աճը, մյուս կողմից սպառողների իրավունքների պաշտպանությունը պահանջում են թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակով ապահովել շա-

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Գ. Բեքմեզյան:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, **Գ. Հարությունյանի** և **Ա. Վաղարշյանի խմբ.**, Եր., «Իրավունք» հրատ., 2010, էջ 380:

հերի հավասարակշռություն տնտեսվարող սուբյեկտների և սպառողների միջև, ինչն իր հերթին պայմանավորում է սույն ոլորտում առաջացող հարաբերությունների ուսումնասիրման, առկա օրենսդրական կարգավորման բացերի և թերությունների բացահայտման անհրաժեշտությունը:

Սպառողների իրավունքների պաշտպանությանը մեծ ուշադրություն է դարձվում նաև միջազգային իրավական ասպարեզում: Մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված «Սպառողների շահերի պաշտպանության ղեկավար սկզբունքներ»-ի (ընդլայնված 1999 թվականին) 11-րդ կետում շեշտադրվում է այն հանգամանքը, որ կառավարություններն ապրանքների անվտանգության ապահովման համար պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ կամ խթանեն այնպիսի միջոցների ձեռնարկումը՝ ինչպիսիք են օրենսդրական ակտերը, տեխնիկական անվտանգության կանոնները, ազգային կամ միջազգային նորմերը և այլն¹:

ՀՀ-ում սպառողների իրավունքների պաշտպանության կարևորության մասին է վկայում այն, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում, ի թիվս այլ փոփոխությունների, ՀՀ Սահմանադրության 31.1 հոդվածով անդրադարձ կատարվեց ապրանքների որակի նկատմամբ վերահսկողության իրականացման անհրաժեշտությանը և սահմանադրական մակարդակով ամրագրվեց պետության պարտականությունը սպառողների շահերի պաշտպանության ոլորտում:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 31.1 հոդվածի համաձայն.

«Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ»:

Հարկ է նշել, որ անհատ սպառողները և նրանց կազմակերպությունները 31.1 հոդվածի գործողության շրջանակից դուրս կարող են օգտագործել Սահմանադրությամբ և օրենքներով երաշխա-

¹ Տե՛ս <http://www.consumersinternational.org/who-we-are/un-guidelines-on-consumer-protection/>

վորված իրավունքների և ազատությունների պատշապանության և ինքնապաշտպանության ողջ զինանոցը:

Այս համատեքստում, մեկնաբանվող հոդվածն իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, երաշխավորման ընդհանուր համակարգը լրացնող սահմանադրական նորմ է, լրացուցիչ երաշխիք՝ նշված կատեգորիայի անձանց իրավունքների պաշտպանության համար, որից բխում են հետևյալ իրավադրույթները. ա) պետությունը պարտավոր է պաշտպանել սպառողների շահերը, բ) պետությունը պարտավոր է իրականացնել օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի հսկողության նկատմամբ¹:

Սպառողների իրավունքների և օրինական շահերի լիարժեք պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության մասին է վկայում այն, որ դեռևս 2001 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը² (այսուհետ՝ Օրենք), որով կարգավորման են ենթարկվում սպառողների և արտադրողների միջև ապրանքների վաճառքի ժամանակ ծագող և համանման հարաբերությունները:

Ընդհանուր առմամբ այս ոլորտում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները, որոնք ունեն հրատապ լուծման կարիք՝

- 1) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվտանգության և որակի ապահովում,
- 2) սպառողների իրավունքների համապարփակ պաշտպանություն,
- 3) պատճառված վնասի դեպքում պատասխանատվության հարցի լուծում:

Առկա խնդիրների լուծումը և շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանությունը առաջին հերթին ենթադրում են այս ոլորտում առաջացող հարաբերությունների իրավական համալիր կարգավորում:

¹ Տե՛ս նշված աշխատությունը, էջ 381-382:

² Ընդունվել է 26.06.2001 թ.: Ուժի մեջ է մտել 01.01.2002 թ.: ՀՀՊՏ 2001.08.02/25(157):

Հարկ է նշել, որ հայրենական իրավագիտության մեջ ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարցերին որոշակի անդրադարձ է կատարվել միայն ի.գ.թ., դոցենտ Գ. Բեքմեզյանի «Արտապայմանագրային պարտավորություններ» մենագրության, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք» դասագրքում (Երրորդ մաս):

Ապրանքների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարցերը կարգավորող կարևորագույն օրենսդրական ակտը ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն է (այսուհետ՝ Օրենսգիրք): Ապրանքների հետևանքով պատճառված վնասի հատուցման հիմքերին անդրադարձ է կատարվում Օրենսգրքի 1088-րդ հոդվածում:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից»:

Վերը նշված հոդվածի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել ապրանքների հետևանքով պատճառված վնասի հատուցման հետևյալ հիմնական տարրերը՝

1. Վնասի առկայություն, ինչն արտահայտվում է ֆիզիկական անձի կյանքին, առողջությանը, գույքին կամ իրավաբանական անձի գույքին վնաս պատճառելու մեջ,

2. Հակաիրավական գործողություն, որն արտահայտվում է ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերություններ թույլ տալով, կամ դրանց մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելով,

3. Պատճառական կապ՝ վերը նշված հակաիրավական գործողության և առաջացած վնասի միջև:

Գրականության մեջ արտահայտված տեսակետի համաձայն այս դեպքում առկա է պատճառված վնասի համար պատասխանատվություն սահմանող հատուկ իրավական ռեժիմ, որն արտահայտվում է նրանում, որ առաջին հերթին պատասխանատու անձանց շրջանակը հատուկ նախատեսված է օրենքով, երկրորդ՝ պատասխանատվությունը վրա է հասնում անկախ մեղքից, երրորդ՝ պատասխանատվության վրա հասնելը սահմանափակված է օրենքով նախատեսված ժամկետներով¹:

Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտականության առաջացման հատուկ պայմանների շարքին են դասվում՝ առաջին՝ պատասխանատվություն կրող հատուկ սուբյեկտը, երկրորդ՝ ապրանքի ներկայացման և օգտագործման հատուկ պայմանները, երրորդ՝ վնաս պատճառելու պահը²:

Վ.Պ Մոզոլինի արտահայտած տեսակետի համաձայն վնասի հատուցման հիմնական պայմաններն են հանդիսանում՝ վնասի, վաճառողի հակաիրավական գործողությունների առկայությունը, որոնք առաջացնում են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության բաղադրամասային, կառուցվածքային կամ այլ թերություններ՝ այդ թվում դրանց մասին ոչ հավաստի կամ ոչ բավականաչափ տեղեկատվության տրամադրման հետ կապված գործողությունները, պատճառական կապը հակաիրավական գործողության և առաջացած վնասի միջև³:

Առաջացած վնասի և վերը նշված հանգամանքերի միջև պատճառական կապի բացակայության դեպքում վնասը հատուցվում է ընդհանուր հիմքերով⁴:

¹ Տե՛ս <http://www.bibliotekar.ru/codex-predprinimateley-2/index.htm> **М. И. Брагинский, В. В. Витрянский и др.**, Комментарий к части второй Гражданского Кодекса Российской Федерации для предпринимателей, М.: Фонд "Правовая культура", 1996.

² Տե՛ս **Товмасын А. Р.**, Обязательства по возмещению вреда, причиненного недостатками товара (работы, услуги), Автореф. дис. ... к.ю.н., Москва, 1999, էջ 152:

³ Տե՛ս <http://pravo.news/kniga-grajdanskoe-pravo-rossii/otvetstvennost-prichinenie-vreda-vsledstvie-9862.html> **В. П. Мозолин**, Гражданское право, Часть 2., 2007.

⁴ Տե՛ս http://lawtoday.ru/razdel/biblio/graj-prav/gp-tom-2/DOC_527.php

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի վերլուծությունը վկայում է այն մասին, որ վերը նշված հոդվածով պատասխանատվություն է սահմանվում անկախ վնաս պատճառողի մոտ մեղքի առկայության հանգամանքից:

Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի՝ առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի առանցքային ճյուղերից մեկը¹:

Ուշադրության է արժանի նաև Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, որտեղ հատուկ շեշտադրում է, որ ապրանք վաճառող կամ արտադրող, աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող անձի և տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքը որևէ ազդեցություն չի կարող ունենալ վնասի հատուցման հանգամանքի վրա:

Այս ամենը վկայում է այն մասին, որ ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը հանդիսանում է արտապայմանագրային պարտավորության առանձնահատուկ տեսակ:

Վերը նշվածի հետ կապված դիտարկենք նաև այն հարցը, թե ինչ պայմանների առկայության դեպքում և ինչ նորմերով ղեկավարվելով տուժողը կարող է պահանջել ապրանքների հետևանքով պատճառված վնասի հատուցում՝ հաշվի առնելով վնաս պատճառողի հետ պայմանագրային կամ արտապայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքը:

Վերը նշված հարցի պարզաբանման համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ՝ 1) պայմանագրային և արտապայմանագրային պարտավորությունների հիմնական տարբերություններին, 2) պայմանագրային և արտապայմանագրային հայցերի մրցակցության հարցին:

Վնաս պատճառելուց ծագող իրավահարաբերությունների և պայմանագրային իրավահարաբերությունների տարբերությունն ընկած է նախ և առաջ դրանց առաջացման հիմքում: Դեյիկտի և պայմանագրի տարբերակման հիմքերից է նաև այն հանգամանքը, թե օ-

¹ Տե՛ս **Բեքմեդյան Գ. Հ.**, Արտապայմանագրային պարտավորություններ., Եր., Երևանի պետ. համալս. հրատ., 2009, էջ 237:

րենսդրության որ նորմերով է կարգավորվում կոնկրետ իրավահարաբերությունը¹:

Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունները միմյանցից սահմանազատվում են հետևյալ առանձնահատկություններով՝

1) ծագման հիմքերով՝ պայմանագրային պատասխանատվության ծագման հիմք է պայմանագիրը կամ կողմերի կամահայտնությամբ առաջացող այլ գործարքը, իսկ արտապայմանագրային պատասխանատվությունն առաջանում է ուրիշի անձին կամ գույքին վնաս պատճառելու կամ անհիմն հարստացման հետևանքով,

2) պայմանագրային պատասխանատվության ձևը և ծավալը կարող է սահմանվել, ինչպես նաև փոփոխվել թե՛ օրենքով, թե՛ կողմերի համաձայնությամբ, մինչդեռ արտապայմանագրային պատասխանատվության բոլոր կանոնները սահմանվում են միայն օրենքով,

3) պայմանագիր կնքելիս՝ կողմերն իրավասու են սանկցիաներ նախատեսել այնպիսի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, որոնց համար օրենքով սահմանված չեն, իսկ արտապայմանագրային պատասխանատվության սուբյեկտները նման իրավունքից չեն օգտվում,

4) պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների կիրառման համար օգտագործվում են տարբեր կանոններ²:

Դիտարկենք երկու հիմնական տարբերակ՝

1. Տուժողը չի գտնվում վաճառողի կամ արտադրողի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ,

2. Տուժողի և վնաս պատճառողի միջև առկա են պայմանագրային հարաբերություններ, և վնասը պատճառվել է ապրանքների հետևանքով:

Առաջին պարագայում ապրանքի հետևանքով պատճառված վնասի հատուցումը կիրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով: 2-րդ պարագայում հարց է առաջանում, թե արդյոք տուժողը կարող է պահանջել

¹ Տե՛ս վերը նշված աշխատությունը, էջ 8-9:

² Տե՛ս **Բարսեղյան Տ. Վ.**, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը., Եր., Երևանի համալս.հրատ., 2006, էջ 81-82:

վնասի հատուցում պայմանագրով նախատեսված հիմքերով և պայմաններով՝ հաշվի առնելով տուժողի և վնաս պատճառողի միջև համապատասխան պայմանագրի առկայությունը, թե վնասի հատուցումը պետք է իրականացվի բացառապես արտապայմանագրային պատասխանատվության կանոններով:

Հարկ է նշել, որ տարբեր պետությունների օրենսդրություններում հայցերի մրցակցության ճանաչման հարցը որոշվում է տարբեր կերպ:

Մ. Ի. Կուլագինի արտահայտած տեսակետի համաձայն շատ զարգացած երկրներում, ինչպիսիք են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Ճապոնիան, Անգլիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, համանման դեպքերում ճանաչվում է տուժողի ընտրության իրավունքը՝ ներկայացնել պայմանագրի խախտման հետ կապված հայց, թե դեղիկտի հետ կապված հայց: Իրավաբանական գրականության մեջ ընտրության այս իրավունքը դիտարկվում է որպես պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության մրցակցություն:

Ֆրանսիական իրավունքում չի թուլատրվում պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության մրցակցություն: Եթե վնասը պատճառվել է պայմանագրային պարտավորության խախտման հետևանքով, ապա կարող է առաջանալ միայն պայմանագրային պատասխանատվություն: Անգլոամերիկյան իրավական համակարգում քաղաքացիաիրավական ոլորտի պատասխանատվությունը բաժանվում է պայմանագրայինի և արտապայմանագրայինի¹:

Վ.Ս Բելիխի արտահայտած տեսակետի համաձայն անգլիական դատական պրակտիկայում պատասխանատվության հնարավոր տարբերակվող ծավալը ենթադրում է հայցվորի կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայց ներկայացնելու հնարավորություն կամ դատարան համանման հայցի ներկայացում՝ կապված անձի առողջությանը վնաս պատճառելու կամ մահվան հետ:

¹ St' u <http://www.twirpx.com/file/384017/> **Кулагин М. И.**, Избранные труды по акционерному и торговому праву, 2-е изд., испр. -М., Статут, 2004.

Օ. Ս. Իռֆեի արտահայտած տեսակետի համաձայն, քանի որ վիճող կողմերը գտնվում են մեկ իրավահարաբերության մեջ, իսկ վեճը առաջացել է դրա որոշակի խախտման հետևանքով, հետևաբար խոսք կարող է լինել միայն մեկ հայցի մասին: Այդ պատճառով պրակտիկայում բազմաբնույթ հայցերը չշփոթելու համար անհրաժեշտ է հստակ սահմանագատել դրանց բովանդակային տարբերությունները, ինչպես նաև ներկայացման պայմանների տարբերությունները¹:

Պայմանագրով չեն կարող նախատեսվել հատուցման պայմաններ, քանի որ դրանք իմպերատիվ կարգով ամրագրված են դելիկտային իրավունքի նորմերով: Պայմանագրով կարող է միայն նախատեսվել վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցման ավելի բարձ չափ: Օրենսդրությամբ արտադրողին կամ վաճառողին հատուցման պահանջ ներկայացնելու այլընտրանքային հնարավորության նախատեսումը չպետք է դիտարկել որպես հայցերի մրցակցություն, քանի որ տուժողին ընձեռնվում է ոչ թե վնասի հատուցման հիմքերի ընտրության հնարավորություն, այլ վնաս պատճառած սուբյեկտների միջև ընտրություն կատարելու հնարավորություն²:

Պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյանի արտահայտած տեսակետի համաձայն, եթե վնասը պատճառվել է պայմանագրային պարտավորության խախտման հետևանքով, ապա այն փոխհատուցվում է ոչ թե արտապայմանագրային պատասխանատվության նորմերով սահմանված կանոններով, այլ պայմանագրային պատասխանատվության խախտման համար սահմանված կանոններով կամ կողմերի միջև կնքված պայմանագրով: Սակայն պետք է նկատի ունենալ, որ որպես ընդհանուր կանոնից բացառություն, օրենքը պահանջում է արտապայմանագրային պատասխանատվության կանոններով ղեկավարվել այն դեպքերում, երբ պայմանագրային պարտավորությունների չկատարմամբ վնաս է պատճառվել քաղաքացու կյանքին կամ առող-

¹ St' u այս հեղինակների կարծիքը **Сергеевич М. А., Васильевич Х. Р.**, Сравнительно-правовой анализ разграничения договорной и деликтной ответственности за вред, причиненный вследствие недостатков товаров, работ или услуг по действующему законодательству РФ, «Бизнес в законе», Экономико-юридический журнал, 2013, № 6, էջ 47:

² St' u վերը նշված աշխատությունը, էջ 48-49:

ջությանը՝ օրինակ փոխադրողի պատասխանատվությունը ուղևորի կյանքին կամ առողջության պատճառված վնասի համար¹:

Պայմանագրային հարաբերությունների դեպքում վնաս պատճառելն առաջացնում է ինքնուրույն դելիկտային իրավահարաբերություններ: Արդյունքում պայմանագրի կողմերը մասնակցում են առանձին պահանջները պարունակող երկու հարաբերություններում²:

Հաշվի առնելով տարբեր հեղինակների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները՝ մենք հակված ենք այն տեսակետին, որ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների հետևանքով անձին վնաս կարող է պատճառվել նաև պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով, սակայն օրենսդրությամբ նախատեսված է պայմանագրային պարտավորության խախտման դեպքում ապրանքների հետևանքով անձին պատճառած վնասի հատուցումը արտապայմանագրային պատասխանատվության կանոններով պահանջելու իրավական հնարավորություն՝ որպես ընդհանուր կանոնից բացառություն, ինչը ուղղված է նաև և առաջ տուժողների շահերի համապարփակ պաշտպանությանը:

¹ Տե՛ս **Բարսեղյան Ս. Վ.**, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը., Եր., Երևանի համալս. հրատ., 2006, էջ 82-83:

² Տե՛ս նշված աշխատությունը, էջ 85:

Шушаник Гукасян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

ОСОБЕННОСТИ КОМПЕНСАЦИЯ УЩЕРБА, ПРИЧИНЕННОГО НЕДОСТАТКАМИ ТОВАРОВ, РАБОТ И УСЛУГ, В КОНТЕКСТЕ ДОГОВОРНЫХ И ДЕЛИКТНЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ

Компенсация ущерба, причиненного недостатками товаров, является особым видом деликтного обязательства. В работе представлен анализ особенностей, связанных с возмещением ущерба причиненного недостатками товаров, разница между договорными и деликтными обязательствами, влияние договорных отношений между потерпевшим и причинителем вреда на правоотношения, связанные с возмещением ущерба. В работе обоснована необходимость разделения обязательства возмещения ущерба, причиненного товарами, как особого вида деликтового обязательства, необходимость требования компенсации связанной с ущербом, правилами деликтной ответственности, даже если потерпевший и лицо, являющееся *причинителем вреда*, состояли в договорных отношениях.

Shushanik Ghukasyan
PHD Student of the YSU Chair of Civil Law

THE PECULIARITIES OF THE COMPENSATION OF THE DAMAGE CAUSED BY THE SHORTCOMINGS OF PRODUCTS, WORKS AND SERVICES IN THE CONTEXT OF CONTRACTUAL AND DELICT OBLIGATIONS

The compensation of the damage caused by the shortcomings of products is considered as a special type of delict obligation. The work presents the analyze of the peculiarities connected with the compensation of the caused damage, the difference between delict and contractual obligations, the influence of the contractual relationship between the

injured party and the person who causes harm on legal compensation of the damage.

The work justifies the necessity of separating the compensation of the damage caused by the products as a special type of delict obligation, the necessity to demand the compensation of the damage by delict responsibility rules even if the injured party is in contractual relationship with the person who has caused the harm.

Բանալի բառեր՝ *ապրանք, աշխատանք, ծառայություն, պատճառված վնաս, դելիկտային պարտավորություն*

Ключевые слова: *товары, работы, услуги, нанесенный ущерб, деликтное обязательство, дифференциация договорного и деликтного обязательства*

Key word: *products, works, services, caused damage, delict obligation, the differentiation of contractual and delict obligation*